

## ՆՈՐԻՑ ՄԻ ՊԱՅԾԱՒ ԶՕՐԱԽՈՐ ԳՐԻՉ

Սկսած Վերապաքաղ Վահագնի հրեղէն ծնունդից, համակուած ոսկե-  
մայր Անահիտի ծովացող բարութեամբ, գեղեցիկ Արայի անբեկանելի հաւա-  
տարմութեամբ, ճառագայթել են Հայոց արուեստի լուսեղէն ակունքները:

Շարուել են մեր բանաստեղծութեան ոսկէ տողերը, մեր վաղ դպրու-  
թեան անաղարտ մարգարիտները:

Դեռեւ հնազոյն դարերի խորքէջ կայծակել են մեր առասպելներն ու  
հին վէպերի բեկորները վառ: Եւ մեր առաջին գրիչները հաւաքել են ողջը, տը-  
ւել դարերին:

Ու մեր փոքր ու մեծ արքավայրերի լուռ խորախորհուրդ գմբէթների  
տակ, մեր խւտատես տաճարների քիւռ ու կամարների հովանու ներքոյ, դժադր-  
ուել են մեր մագաղաթները, մեր մանրանկարչութեան սքանչելիքները: Նուագ-  
ներ են դարձել մեր հոգու մրմունջները, ապառաժների կարծր կողերին քան-  
դակուել են մեր ճամբայ չգտած սէրերն ու երազանքները:

Չքնաղ գոյներ ու ձևեր են առացել մեր յուզումներն ու տաղանայները,  
և դարերի ամայութեան մէջ շարուել են մեր պատմութեան երկաթագիր հա-  
տորները՝ որպէս անկրկնելի հարստութիւն ողջ մարդկութեան համար:

Եւ այս ամէնը մեր հոգեւոր հայրերի գերմարդկային նուիրումով, մեր  
ծանրապոյն օրերին անգամ՝ ապագայի հանդէպ ունեցած մեր հաւատով ու  
կամքով, ողու ամբողջեամբ ու արտի լոյսով. բոլոր չափերից, սահմաններից  
վեր անձուրդութեամբ:

Տեսնու՛մ ես ասես ցուրտ մենարանների մոմերի տակ նստած, յայտնի  
և անյայտ մեր հանճարներին, խոնարհ ու դունատ դէմքերը հակած մագաղաթ-  
ներին՝ նկարում են ու նաղաչում լուսէ ծաղիկներ, դէմքեր սրտառուչ, քիւեր  
ու կամար և նախշուն գրեր ու սէրեր փակուած, երազներ շքեղ և այսպէս ան-

ժրգիւր են ձօնել, կերպարներ ձուլել, սաք ու առասպել, իմաստու-  
թիւններ. աստղեր են նետել ու ծիածաններ իրենց խաւարից՝ հոգիների մէջ,  
լուսապատկեր մեծ դալիքներին:

Պահելու համար ինքնութեան ոգին, պատկերը ցեղի և կամքը ամուր  
միշտ անհաւասար կռիւների մէջ, անվերջ կեղեքուող մեր ժողովրդի:

Եւ գերմարդկային ուժով անկոտորում ու անմեկնելի, նրանք վառեցին  
փարոսներ չքեղ մեր արուեստների, գիր ու դպրութեան:

Եւ այսպէս ողու ջահերը պահած գլուխներից վեր, անցել են նրանք  
խոր-խոր դարերի խաւարի միջով, պահելով կործան, արհաւիրքներով և հասցը-  
րել են մեր խօսքը բարի կատարելութեան, մեր երգը ողու ներդաշնակու-  
թեան, մեր անունները՝ հանուր մարդկութեան ստեղծած անհաս լոյս կատար-  
ներին:

Մաշտոց, Խորենացի, Եղիշկ, Եղիշէ, Նարեկացի, Ծնորճայի, Քուչակ,  
Թորոս Ռոսլին, Ֆրիկ, Սայաթ Նովա, Մխիթար Աբբաս, Դևոնդ Ալիշան, Խրիմ-  
եան Հայրիկ, Կոմիտաս. . .

Եւ այսպէս գալով ոսկեմշուշ հեռուններից, Միջնադարի խաւարների

միջոցով, ջահերի նման վեր պահած հզոր անունները մեր, որոնք սգեղէն վահանների դարձան բոլոր պիղծ ու նենգ ոսոխների դէմ, որոնք պահել են հաւատը խորունկ, միտքը մշակել, խռովել հողին յորդացումներով մեծ ու լուսեղէն, կայծակումներով շքեղ ու բարի և ստեղծել են համաժարողային գլուխդրոցներ, որպէս ինքնութեան ու ոգու ուժի մեծ հանճարածին վկայադիրներ:

Եւ մենք որքան ենք պարտական հիմա լոյսի ու լաւի մեծ յաղթանակին:

Ոնցեւ զնացել, փոշի են դարձել բոլոր տեսակի կործանողները պիղծ ու չարաննդ: Մե բծերի նման մնացել են նրանց սև անունները մազադաթների սակէ էջերին և մեր արուեստի սքանչելիքները: Մեր երազները կեանք առած արդէն:

Եւ մինչև այսօր սրբութեամբ գործող իմաստութիւնը մեր գրիչների: Եւ մինչև հիմա երբեք չնդհատուող մեր ոսկեւղթան:

Եւ այդ յուսաւոր չէն անունների մեծագոյն մասը կապուած է եղել պատմական անխոնջ ազգապահպան այս մեծ կենտրոնի, այս խոր հնաւանդ որբավայրի հետ, որի անթափանց կռու պատերի մէջ ապաստանել են ու ոյք պիղծել մեր մշակոյթի պատմութեան ընտրանիները:

\* \* \*

Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Տէրտէրեանը, բունաստեղծ Եղիվարդը՝ իր կոչումով, իր ճակատագրով, իր ամբողջ կեանքով ու աշխատանքով անմիջական շառաւիղն է իր նախորդների, նրանց մեծ գործի շարունակողը, այնքան բարդ իրադրութեան մէջ, այնքան դժուարահաճ փիւռքահայ աշխարհում:

Նրա ողջ կեանքի մեծ մտահոգութիւնը ջլատուած ուժերով, փշուրփշուր, աշխարհով մէկ ցրուած, անկայան, անապաւէն, անյոյս, անհեռանկար փիւռքահայ իրադրութիւնն է, օտարակուլ ովկէանոսներում հայածին տաղանդների կայծկլտալով սուգուելու ցաւը, հնարաւորը փրկելու, անհնարինը իրականացնելու մշտական հոգսը այրուել է շարունակ նրա հայրենասէր հոգում, նրա հնարամիտ, ամէնուրեք օգնող ու հասնող նրա գործարար կեանքում, խորունկ դաւանանք, կամք ու ուժ է դարձել և տաք սնունդ է տուել նրա զրական զօրաւոր տաղանդին:

Մի տեղ անհուն սէրն ու կարօտն է մարդուն բանաստեղծ դարձնում, մի տեղ՝ խորունկ ցաւի կսկիծը, մի տեղ՝ կռուելու, յաղթելու անրկանելի կամքը, մի այլ տեղ՝ անզտնելի կորուստները դտնելու, անհատուցելին հատուցելու ամբողջ կեանքը համակած մշտական ծարաւը:

Եւ այսպէս իր բարդ ճակատագրով, մարմանդ ու յախուռն ալրումների մէջ, իր բարդ ու դժուարին կեանքով ստեղծել է Եղիվարդը մի սրտայորդ ու հարուստ գրականութիւն, ստեղծել է հայրենաշունչ ու հայրենապիտը գործերի մի գունագեղ շարան, մի թանկ հարստութիւն:

Հինգ-վեց տարեկանից անցած Եղեռնի արհաւիրքներով, զրկուած ծընողներից, բոլոր թանկ հարազատներից, ծանր կորուստների մշտական կսկիծը մատուաչ սրտի մէջ, նետուել է նա որբանոցից-որբանոց: Մեծացել, ամբացել է օտար ափերի անկայուն մթնոլորտում: Դիմացել է յարափոփոխ եղանակներին:

Հասկանալի է, թէ որքան ցաւ ու կսկիծ է հոսել նրա տոկուն զարկերակներով, որքան վիշտ ու դառնութիւն է կուտակուել նրա ամուր հոգում:

Եւ իր նախահաշիւներէ նման, նա իր զօրեղ դրօշն է հանել մարտի դաշտ՝ օգնելու իր վտարանդի ժողովրդին, լինել-չլինելու նրա ծանր ու տեսական պայ-  
քարի մէջ, ի խնդիր աշխարհի ամենահզօր ճշմարտութեան, ամենամեծ զգա-  
ցումին, ի խնդիր մարդկային բոլոր սէրերի ու զիզեցկութեան:

Յորդել է կեանքը ծանրակոճակ ալիքներով և Հայոց զարմանալի ճա-  
կատագիրը բոլոր դառնութիւնների ու դժուարութիւնների հետ միասին տուել  
է նրան մեծ ժառանգութիւն: Հոգեկան ուժերի խորունկ ակունքներ, ազգային  
մշակոյթի սիրտառա սնունդ. տուել է քախաւոր հանդիպումներ, ընտիր ու-  
սուցիչներ ու քարեկամներ:

Վաղ երիտասարդութիւնից նրա կեանքի ուղեկիցներն են դարձել մեր  
մշակոյթի 'հշանաւոր գէմբերից'՝ քանաստեղծ Պարթաբէ Եղիշէ Դուրեանը,  
Պատրիարք Թորգոմ Գուշակեանը:

Նրա գրական զեղարուեստական լոբանումների, ճաշակի հասունաց-  
ման, բիւրեղացման հարցերում մեծ դեր են կատարել յայտնի մատուրական-  
ներ՝ մանկավարժ արուեստարան Շահան Պէրպէրեանը, փրկասան գրականա-  
գէտ Յակոբ Օշականը, որոնց հետ քանաստեղծը կապուած է եղել բացառիկ  
բարեկամութեամբ, անձնական մտերմութեամբ:

Աշխարհով մէկ ուխտուած իր վտարանդի ժողովրդի մշտական ցաւերն  
ու խորունկ խնդիրները տուել են նրան ընկալող տաք սիրտ. դառն ու դժուար  
կեանքը տուել է նրան արթուն թափանցող միտք ու տոկունութիւն. մեծ կո-  
րուստների ծանր կսկիծը տուել է նրան անդիլնող սգի. մեր ամբողջ պատմու-  
թիւնը տուել է նրան խմատուն դասեր ու փորձառութիւն: Եւ այս ամէնով  
ամբացած, քանաստեղծ զործիչը իր ամենօրեայ հոգսերի հետ միասին զործի  
է դրել իր զօրաւոր գրիչը, ստեղծելով քաւական հարուստ մի գրականութիւն,  
որի հիմնական մոտիվը մարդու հաւատն է ու ողու մեծութիւնը:

Քառասնական թուականներից սկսած նա հրատարակել է յաջորդարար  
«Մազդապիւնէն Մեղրամոէ», «Քնորակման Գիշերներ», «Անցորդը», «Լերան  
վրայէն երանին», «Սուրբ Մեսրոպ», «Օտարականը», «Հեթանոսաց Առաք-  
եալը», «Ընտիր էջեր», վերջինս հարստացած նոր պոէմներով և նոր խոհական  
ուժեղ քանաստեղծութիւններով:

1975 թուին Եղիվարդը հրատարակեց «Կարմիր Զօրավար» ծաւալուն  
հատորը, նուիրուած, իր խօսքով ասած, Հայոց պատմութեան «Հերոսների  
մեծ հերոսին»՝ Վարդան Մամիկոնեանին:

Այս ամէնի հետ միասին, հրատարակել է քաղմաթիւ գրական, բարո-  
յագիտական, հրապարակախօսական յօդուածներ՝ «Սիրոն» և «Էջմիածին» ամ-  
սադրերի մէջ և սփիւռեալայ մամուլի էջերում:

\* \* \*

Իր ստեղծագործութիւնների մեծ մասի նիւթը նա ընտրում է Հայոց  
պատմութեան հնագոյն էջերից և Սուրբ Գրքի դիւխաւոր դրուագներից, տալով  
իր հերոսներին և զործող անձանց մօտ ժամանակների մարդկանց կեանքն ու  
ոգին, մէջտեղ դնելով իրեն յուզող այսօրուայ հարցերն ու խնդիրները: Սա գը-  
րական ընդունուած ձևերից է, սակայն հեղինակը օգտագործում է այն իր բզ-  
րաղմունքին ու իր կեանքին բնորոշ գծերով:

Եղիվարդի ներկայացրած դէմքերից շատերը՝ Մազդապիւնէն «մեղրա-  
մոէ», Մամարուհին, Սալմէն և առանձնապէս Օտարականը՝ «Աստուծո որ-  
դու» կերպարը, տասնեակ դարերի ընթացքում մշակուել են ժողովուրդների

մեծագոյն հանճարների կողմից, անցել են վերածնունթեան հրաշագործ ժամանակներով, դարձել են անմահ կտաւներ, մեծ քանդակների և բազմազան երկերի նիւթ: Եւ հաւանաբար իւրաքանչիւր հեղինակ իր հոգու ցաւերն ու ցոյանքներն է աշխատել դնել այդ երկարակեաց կերպարների մէջ:

«Ամէն դար կը փորձէ ի՛ր ձեռով ապրեցնել այդ խորհուրդը, գրելով զայն էրկնքի լոյսով, բայց իր արիւննով», գրել է Շդիյարդը իր նախարանի մէջ:

Բիրլիական այս թեմաները բանաստեղծը մշակել է մեսրոպեան հարուստ ու յստակ լեզուով, կենդանի պատկերներով, տաք-տաք թրթռուն ու լեցուն կեանքով, իր մեսրոպեան ընթերցողի համար: Իր մտքի պայծառութիւնը, իր ոճի թարմ ու հիւթեղ պարզութիւնը, իր պատկերաւոր լեզուի բնական ու բուխ հնարանները թարմութիւն են տալիս գործերին, որոնց մէջ կուտակուած են մարդկային բոլոր ժամանակների մտորումներն ու փրկսփայլալուծութիւնը, ով իմանայ՝ մշակուած է՛նչ հանճարների ձեռքով:

Եւ մեր բանաստեղծը ներկայացնում է այնպէս, որ մեզանից շատ հեռու այդ կերպարները ընկալուած են ու հասկանալի դառնում այսօրուայ ընթերցողին:

Վերցնելով հեռուոր անցեալի թիմաները, բանաստեղծը իր արուեստով տալիս է այսօրուայ դոյն ու երանգ, բնական մարդկային մտորումներ, ցաւեր ու խնդիրներ, ժամանակի շնչառութիւն, միանշամայն պահելով սրբազան վեհութիւնը, դրանով իսկ ցոյց տալով իր նախընտրած թեմաների խոր մարդկայնութիւնը:

#### «ՄԱԳԴԱՂԻՆԷՆ ՄԵՂԻԱՄՈՒՄԷ»

Հետաքրքիր է, որ մեծայարգ բանաստեղծը իր գրական կեանքը սկսել է իր ստեղծագործութեան զուգակցործոցով՝ «Մագդաղինէն Մեղրամոմէ» գեղեցիկ պոէմով: Անկախ անուններից և նախասկունքներից, սա կեանքով լեցուն մի սիրամիջ է, գրեթե վարպետ ձեռքով, անջնջելի պատկերներով, հոգեբանական ներութիւններով, համակող ու հաղորդական, մարդկայնօրէն տաք, պարզ ու խորունկ արտայայտութիւններով:

Դժուար է պատկերացնել մի աւելի կենդանի, թրթռուն ու սիրաշաղախ արարած, որքան այս գրքի բիրլիական հերոսուհին: Լեզնդի բուն էութիւնը լինելով խորը մարդկային, բարձր արուեստով մշակումը տուել է մի շատ գեղեցիկ գործ:

Առաջին իսկ էջերին, վրձնի մի քանի հարուածով, հեղինակը նկարում է գազազած ու բիրտ մարխի տխմար ու վայրագ պատկերը, որն ուզում է քարկոծել Մագդաղինէին:

Հալածակաւ, անպաշտպան,

Վռնմակիւմ դէմ փրփրբարած,

Ան եղմիկի մէր ջրման:

. . .

Ամրոխիւմ դէմ արիւննուշտ,

Որ քարերով կը պապանար. . . :

. . .

Յիսուս անոնց նայեցաւ.

Ու ժրպոնցաւ տըրտօրէմ. . . :

Տըժգայն դէմքն իր գեղեցիկ,

Մագազաթի մ'էջերէն  
Կարծես թէ վեր առնուած,  
Դիտեց զանոմք ընդերկար,  
Անդրաշխարհէ մը ամեռն .  
— Ձեզմէ անմեղն էմ առաջ  
Նետէ քաղ քարն այս կրնոջ» :

. . .

Սառսուռ մ'անցաւ ամբոխէն .

. . .

Քարերն հատ հատ ինկամ վար :

Եւ սկսեալ է մի անսահման խորունկ սէր, հոգեկան աշխարհի մի փր-  
լուցում ու վերածնունդ, մի կատարեալ յեղաշրջում, ոչ թէ հրաշքերի զօրու-  
թեամբ, այլ մեծ ու խորունկ սիրոյ լուսարձակումով, մարդկային վեհութեան  
ճառագայթումով, հոգու խորքերի ամենաթանկի արթնացումով :

Կի՞նք անձայն կ'արտասուէր . . .

. . .

Կ'ուզէր ամօր ռտփերում  
Առջէն իյնալ ու հրծծել .  
Դեռ ոչ մէի չառքերած  
Բառք, ամբումդ իր սէրէն,  
Ձոր մէկ անգամ կ'ըսէ մարդ :  
Բայց տրկար էր իր հոգին  
Նման անքն քիթքնի :

Այս ամէն նրբութեան ու խորութեան հասնելու և հասցնելու համար  
մեծապէս օգնում են բանաստեղծի լեզուական նուրբ ու յստակ մտածողութիւ-  
նը, ուրոյ պատկերներն ու ճիշդ բնութեան յակոնիկ խօսքը :

Ինչպէս Վերածնութեան խոշորագոյն նկարիչները Աստուածամայրը  
նկարելիս նկատի էին ունենում կենդանի, պարզ, երբեմն զեղջուկ աղջիկների,  
այնպէս էլ այս աստուածածաշնչեան կերպարը կենդանի կ'իյնէ, ջերմ, յուզաթա-  
թաւ, համակուած ամենամարդկային սիրով : Հեղինակը նկարադրել է այնպէս,  
որ դուրսէն ես երիտասարդ կնոջ տաք շնչառութիւնը, սրտի զարկերն ու գէմբի  
շիկնանքը :

Լայն են բացուեր դռներն ամօր  
Խեղճ հոգիին՝  
Բաներու որ ամուսն չունին :

. . .

— Դարձա՛ր ինձի,  
Դա՛ն՝ գեղամի Աստուածորդի .  
Ա՛հ, գիտէի թէ դամբանէն  
Թէ դըժոխէն ու երկըմբէն  
Սէրը կարող է ետ քերել  
Իր տեմջալին :  
Եկո՛ւր ինձի . . . » :

Սա ներումի կախարդանքն է, մեծ հոգու և մեծ սիրոյ արարիչ, լու-  
սաւոր ճանապարհը :

ՄԱՐՈ ՄԱՐԿԱՆԵԱՆ

(Շար. 1)